«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Ուսուցիչ՝ Հովսեփյան Արեգնազ

Ուսումնական հաստատություն՝ Դաշտադեմի մ/դ

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------

1. **«Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» էպոսը՝ համահայկական մշակութային արժեք ----------3**
2. **Աշակերտների մեջ հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ամրապնդումը ----------9**

Եզրակացություն----------**14**

Գրականության ցանկ----------**16**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ազգային էպոսներն ամեն ժողովրդի երազանքներն արտահայտող գրական հուշարձաններ են, որոնք ուղեկցում են ազգի հետագա ընթացքին՝ հիշեցնելով, թե ինչ է դնում հայրենիք սրբազան հասկացության մեջ տվյալ ժողովուրդը:

Ըստ օտարազգի էպոսագետների՝ «Սասունցի Դավիթը» աշխարհի լավագույն էպոսներից մեկն է: Ֆրանսիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդին, ով 1964-ին թարգմանել ու հրատարակել է էպոսը ֆրանսերենով, համարել է, որ իր խաղաղասիրական ու դեմոկրատական գաղափարախոսությամբ հայկական ազգային էպոսն անզուգական է:

Ժամանակակից աշխարհում կան լայն հնարավորություններ տարբեր պետությունների ու ազգերի միջև երկխոսության կայացման և սոցիալ-մշակութային պատնեշների հաղթահարման համար: Մշակութային համահարթեցման գործընթացները, բարոյական արժեհամակարգերի փոխակերպումները, համամարդկային արժեքների ընդհանուր հարթակի ձևավորման միտումները յուրաքանչյուր երկրի ազգային ինքնության պահպանման ու արդիականացման խնդիրներն են: Համաշխարհայնացման գործընթացներին զուգահեռ՝ օրեցօր ավելանում են էթնիկական և կրոնական հիմքի վրա տեղի ունեցող հակամարտությունները՝ խորացնելով ինքնության ճգնաժամը:

Այսպիսով, տարատեսակ մարտահրավերներին դիմակայելու համար անխուսափելի են դառնում ազգային ինքնությանն առնչվող պատմական ու տեսական հարցերի քննարկումը, անհատական ու ազգային ինքնության կերպափոխումների իմաստավորումն ու արժևորումը:

Ազգային ինքնության հիմնախնդիրը հայերիս համար կարևոր է նախ և առաջ այն պատճառով, որ մեր հայրենակիցների զգալի մասն ապրում է հայրենիքից հեռու, որտեղ ձուլվելու վտանգն առավել մեծ է: Նույն խնդիրը ծառացած է նաև հայրենիքում ապրող հայ հասարակության այն հատվածի առջև, որն անհաղորդ է ազգային արժեքներին:

Հայտնի է, որ ազգային ինքնության համակարգը բազմաշերտ է և ներառում է մի շարք բաղադրիչներ, որոնցից են մարդաբանական որոշակի գծերը, հոգեկերտվածքը, լեզուն, կրոնը, մշակույթը և այլն: Ինքնության կառուցվածքում մեծ նշանակություն ունի նաև պատմական հիշողությունը, որով իմաստավորվում է տվյալ ազգի անցյալը և հյուսվում նրա ինքնության «ոստայնը»: Այդ հիշողության մեջ ամրապնդվում են ոչ միայն անցյալում կատարված իրադարձությունները, այլև պատմական իրողությունների սեփական ընկալումներն ու իմաստավորումները: Խոսքը վերաբերում է թե գրավոր, և թե բանավոր պատմությանը, որոնք դրսևորվել են մշակույթի մեջ որպես առասպել, հեքիաթ, էպոս և այլն:

Դիմակայելով ժամանակի կործանիչ ազդեցությանը՝ դրանք չեն մոռացվել, այլ փոխանցվել են սերնդեսերունդ՝ հանդես գալով իբրև հավաքական ինքնության յուրօրինակ «այցեքարտ»:

Հաշվի առնելով ժողովրդական բանահյուսության, մասնավորապես՝ էպոսի դերն ու նշանակությունն ազգային ինքնաճանաչողության գործում հետազոտության առարկա է դարձել «Սասնա ծռեր» էպոսը:

Էպոսում արտահայտվել է հայի հավաքական կերպարը իր բոլոր ներքին հակասություններով, սխրագործություններով ու դավաճանություններով, մեծագործություններով ու ազգադավ անտարբերությամբ, օտարամոլությամբ ու անմնացորդ նվիրումի արտահայտություններով: Հայկական էպոսում արտացոլվել են հայոց բարոյական արժեհամակարգի անկյունաքարային գաղափարները, արծարծվել մարդասիրական բազմաթիվ հիմնախնդիրներ: Էպոսում արտացոլված են ազգային ինքնության տիպային գծերը, որոնց բացահայտումը կարող է հնարավորություններ ընձեռնել քաղաքակրթական հիմնախնդիրների իմաստավորման, մերօրյա իրականության բազմաթիվ թերիների ախտորոշման և հաղթահարման համար: Հումանիտար տարբեր գիտությունների հետազոտողներն ընդգծում են էպոսի էական նշանակությունն ազգային արժեքների ձևավորման ու պահպանման գործում՝ փաստելով ազգային ինքնության արդիականացման և նորոգման բարդ գործընթացում այդ հավաքական և բացառիկ ստեղծագործության մեծ դերը:

1. «Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» էպոսը՝ համահայկական մշակութային արժեք

«Սասունցի Դավիթը» իր գաղափարի և փիլիսոփայական թռիչքի
բարձրությամբ, իր դիապազոնով, մի խոսքով, իր էությամբ
ոչ թե հայ ժողովրդի պատմության մի էպիզոդն է,
այլ հայ ժողովրդի ողջ պատմությունը
Դերենիկ Դեմիրճյան

Չնայած հազարամյակների պատմություն ունենալուն հայկական էպոսը, որը հայտնի է «Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» անվամբ, գիտական ուսումնասիրությունների առարկա է դարձել միայն սկսած XIX դարավերջից: Հայկական էպոսի ուսումնասիրությունների բանահավաքը Գարեգին Սրվանձտյանցն է, որն էպոսը գրի է առել 1874 թվականին «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» խորագիրը կրող

գրքույկում: Էպոսի գրառումից հետո սկսվեցին որոնումներ և տարբեր սերունդների բանահավաքների կողմից գրառվեցին շուրջ 160 նոր պատումներ: 1889 թվականին էպոսի մի տարբերակ գրի է առել Մանուկ Աբեղյանը:

Դպրոցներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցանվում է «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագիրը, որը լույս է տեսել 1939 թվականին՝ ակադեմիկոս Հովսեփ Օրբելու մեծարժեք նախաբանով և առավել բարձրարժեք ծանոթագրություններով: Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին էպոսին կցված իր նախաբանում նշում է, թե ովքեր էին այն հմուտ բանագետները, որոնք կազմեցին տպագրված բնագիրը: Նրանք են՝ Մանուկ Աբեղյանը, Գևորգ Աբովը և Արամ Ղանալանյանը:

Թեև հայկական էպոսի ուսումնասիրությունների հետագա ընթացքը եղել է բավականին արգասաբեր, այդուհանդերձ այսօր էլ առկա են որոշակի տարաձայնություններ հայկական էպոսի ծագման, կառուցվածքի, բովանդակային մեկնաբանությունների առնչությամբ: Հայկական էպոսի նկատմամբ բանասերների, գրականագետների ու մշակութաբանների ուշադրությունը չի մարել նաև վերջին տասնամյակներում և շարունակվում է մինչ օրս (Ա. Եղիազարյան, Ս. Հարությունյան, Ա. Սահակյան, Լ. Աբրահամյան, Ա. Պետրոսյան, Լ. Խեչոյան, Թ. Տոնոյան և ուրիշներ):

«Սասնա ծռերը» եզակի երևույթ է աշխարհի էպիկական բանահյուսության մեջ՝ պահպանված հարյուրից ավելի պատումներով: Դյուցազնավեպի համար սկզբնաղբյուր է եղել վիպական բանահյուսությունը: Էպոսը, սկիզբ առնելով Սասունում, պատմվել է բազմաթիվ բարբառներով՝ Մշո, Վանի, Խոյի, Մոկսի, Ուրմիայի և այլն:

Դյուցազնավեպը սկզբնավորվել է Սասունում, բայց աստիճանաբար տարածվել է ամբողջ ժողովրդի մեջ և դարձել համազգային: Այն իր մեջ ներառել է անցյալի առասպելական պատումները՝ սկսած Հայկի և Բելի պայքարից, այսինքն՝ հայ ժողովրդի առաջացման, բռնակալ իշխանությունների դեմ պայքարի ժամանակաշրջանից: Հովհ. Թումանյանը էպոսը դիտում է որպես հնագույն ժամանակներից՝ Հայկ Նահապետից սկսած, ժողովրդի մտածումների, ձգտումների, երազանքների արտահայտություն: «Երկար դարեր բանահյուսությունն է եղել ժողովրդական մտքի միակ ասպարեզը: Հազարամյակների ընթացքում ժողովուրդն է սերնդից սերունդ մշակել Դավթի կերպարը, նրա մեջ դրել իր լավագույն զգացումները, ձգտումները, իղձերն ու նպատակները»:

«Սասնա ծռերը» բաղկացած է 4 ճյուղից՝ «Սանասար և Բաղդասար», «Մեծ Մհեր», «Սասունցի Դավիթ» և «Փոքր Մհեր»: Էպոսն աչքի է ընկնում հերոսների խիստ բազմազանությամբ: Տարբեր ճյուղերում առատ գործածված են էպոսի հերոսների անձնանունները: Ծովինար, Սանասար, Բաղդասար, Առյուծաձև Մհեր, Դավիթ, Փոքր Մհեր… ժառանգական հաջորդականությամբ օժտված հիմնական անձինք, որոնց շուրջ հյուսվում է

դյուցազնավեպը: Հայտնի է, որ էպոսի պատումներից մեկը վերնագրված է երկու հերոսների՝ Դավթի և Միհրի անձնանուններով, որոնք էպոսում ունեն գործածության զգալի հաճախականություն:

Յուրաքանչյուր ճյուղ ունի իր բազում ուսուցողական մասերը: Վերլուծենք դրանք և ընդգծենք այն կարևոր հատկանիշները, որոնք պետք է սերմանել յուրաքանչյուր սովորողի մեջ:

Բնականաբար, առաջատար գաղափարը **հայրենասիրությունն է,** որի մարմնավորողը հայ կինն է՝ Ծովինարը: Բաղդադի խալիֆի հարկահանները գալիս են՝ տանելու հարկը հայոց Գագիկ թագավորից: Ծովինարի գեղեցկությունը տեսնելով («Աղջիկ էնպես խորոտ, էնպես խորոտ»)՝ որոշում են խալիֆին համոզել հարկի փոխարեն կնության առնել Ծովինարին: Խալիֆը պահանջում է Ծովինարին՝ զգուշացնելով, որ մերժման դեպքում կավերի Հայաստանը: Հարցի լուծումը գտնում է հայրենասեր Ծովինարը՝ կամովին իրեն զոհելով հանուն երկրի ու ազգականների.

Ծովինար խանում ասաց.
-Որ ես էն կռապաշտ թագավոր չառնեմ,
Զամեն տի սպանի իմ պատճառով,
Աղեկն էն է, ե՛ս էրթամ,
Ուրիշ մարդու թող բան չլինի:
Ե՛ս մենակ մեռնիմ իմ հոր թերեն.
Ես մեկ ջան եմ, էրթամ, կորսվիմ,
Քանց մեր Հայաստան էրկիր ավերի,
Էն հազար-հազար հոգիք կորուսանին:
Դարձավ ասաց. - Հայրի՛կ, ինձ տուր էնոր:

Էպոսի գլխավոր նպատակներից է նաև **մարդասիրության** դաստիարակումը: Սասունում հաստատված Սանասարն ու Բաղդասարը սկսում են կառուցել իրենց բերդը: Բայց սկզբում կացարաններ են պատրաստում աշխատավոր մարդկանց համար: Այդ քայլի նպատակը մարդասիրական է.

-Առաջ շինենք զէդոնց տներ,
Ու նոր շինենք զմեր բերդ.
Էդ խեղճ մարդեր չեն կարնա
Արևուն առջև կենա:

Էպոսում կա աշխատավոր մարդու նկատմամբ հատուկ պաշտամունք և Սասնա դյուցազուններն ապրում են այդ գիտակցությամբ: Նրանց բնավորության ժողովրդական բնույթը սրանով չի ավարտվում: Նրանք պարզությամբ տիրապետում են ամենահամեստ արհեստների, բարեկամանում են խեղճերի հետ, կամովին ձեռք են մեկնում հոգնած գեղ-ջուկներին, նույնիսկ, եթե նրանք ճանապարհին հանդիպած օտարականներ են:

Միերը ուրույն ներաշխարհով, խոհականությամբ հագեցած մի հերոսատիպ էր, որի մեջ արտացոլված է ժողովրդի կենսափիլիսոփայությունը: Էպոսում այս կերպարը բաժանված է երկու մասի. առաջինը պապի կերպարն է, որն արտացոլում է ծագող արևի նրբագծերը, իսկ երկրորդը թոռան կերպարն է՝ պատկերված մայրամուտի արևի հատկանիշներով: Պապը որսորդ է՝ Առյուծածև մականունը կրող, թոռը՝ աշխարհով մեկ դեգերող, ով հեռանում է դեպի ժայռի խորքերը:

Մեծ Միերը իր կյանքի առաջին իսկ օրերից ոչ թե տարիներով է մեծանում, այլ ժամերով: Էպոսում նա ոչ միայն անպարտելի ուժով օժտված կերպար է այլ **մարդկային բարօրության համար սխրագործություններ կատարող Հերոս.**

-Կուշտի՛ կպնեմ առյուծի հետ:
Միերի հետ գնացած մարդիկ հեռու կանգնան.
Միեր մենակ գնաց:
Գնաց, ինք ու առյուծ առան իրար:
Միեր կանչեց.— Հացն ու գինին, տեր կենդանին:
Կանչեց, մի ձեռ թալեց էդ առյուծի վերի՛ ծնոտ,
Մյուս ձեռ թալեց ներքի՛ ծնոտ,
Ճղեց էդ առյուծ մեջտեղեն,
Արե՛ց էնոր էրկու կտոր:
Մեկ դրեց ճամփու էս դին, մեկէ՝ էն դին:

Միերը կռվի է դուրս գալիս նաև հարևան երկրի վրա իշխող ճերմակ Դևի դեմ, որը փակել էր աղբյուրի ճանապարհը, սպանում է Դևին և ամուսնանում նրա ամրոցում գերության մեջ տառապող չնաշխարհիկ արքայադուստր Արմաղանի հետ, որն էլ լույս աշխարհ է բերում Դավիթին:

Մեծ հարգանքով են ժողովրդական վիպասանները նկարել Դավթի կերպարը: «Դավթի ուժը անսահմանությունն ու տիեզերաց անհունությունը կցուցանե»,- ընդգծել է Գ. Սրվանձտյանը: Նա նկարագրում է Դավթի անվեհերությունն ու վեհանձնությունը Մսրա Մելիքի դեմ կռվելիս, նաև Խանդութի (Դավթի կինը) քաջությունը և նվիրվածությունն իր սիրեցյալի հանդեպ: Միաժամանակ շեշտում է Դավթի մտերմությունը հասարակ գեղջուկների հետ: Հայ բանարվեստի պատմության մեջ Դավիթն իր խորությամբ և անշահախնդիր ազնվությամբ բացառիկ տեղ է գրավում: Իր ամբողջական նկարագրով նա երբեք հետ չի մնում համաշխարհային գրականության լավագույն դյուցազուններից՝ Աքիլլեսից, Հեկտորից, Սիդից, Ռոլանդից ու Մարկոյից …

Օրբելին գիտականորեն հիմնավորում է Սասունցի Դավթի կերպարի հավաքական բնույթ ունենալը: Դավիթը որևէ ազնվական չէ, նրա կերպարում հայ ժողովուրդը մարմնավորել է

ցանկալի **ազգային առաջնորդի կերպարը**: Երկրի տիրակալն առաջին հերթին պետք է մտածի իր ժողովրդի բարօրության, բոլոր խավերի ապահովության մասին: Հենց այդպիսին է Սասունցի Դավիթը:

Դավիթը վերաշինում է Մեծ Միհրի կառուցած Մարութա վանքը: Սակայն ամեն առավոտ վանքը վերակառուցող վարպետներն իրենց կառուցածը գտնում են քանդված: Ոչ ոք չի կարողանում բացատրել դրա պատճառը, մինչև որ Սասունցի Դավիթը երազ է տեսնում, և երազում Աստծո հրեշտակը նրան հրահանգում է եկեղեցու պատի մեջ դնել Դավթի սուրը: Սա խիստ խորհրդանշական դրվագ է: Դեռևս չորրորդ դարից՝ Շապուհ Երկարակյացի օրերից մինչև քսաներորդ դարասկզբի Մեծ եղեռնը, որը երիտթուրքերի ջանքերով նահատակեց մեկ ու կես միլիոն հայերի, հայ ժողովուրդն իր ազգային ինքնության, կրոնական դավանանքի, անկախության համար մղել է ազատագրական կռիվներ: Ահա էպոսի համապատասխան դրվագը.

Էն գիշեր կը քնեն, Դավիթ կը տեսնա՝
Մարութա բարձր Աստվածածին կը գա էրազ, կ՚ասի.
«Քո՛ թուր քո մեջքեն քաշի,
«Իմ հիմ քո թրի վերա ձգի,
«Օրե՛ մի կը շինես, կը թամամցես,
«Պատարագ մեջ վանքիս կը մատուցես,
«Որ ես վեր իմ հիման կանգնեմ»:
Ուստեք տիլ կը զարկեն էդ քարերու բոլոր:
Դավիթ զարթնավ, տեսավ՝ Մարութա բարձր Աստվածածին չըկա:
Քարն իր տեղն է գնացե,
Հողն իր տեղն է գնացե,
Ավազ, կավ ու ինչ որ պատրաստություն կար՝
Ամենն իր տեղն է գնացե:

Էպոսում փառաբանվում է այն անհատը, որը հանուն հայրենիքի պատրաստ է զոհել իր կյանքը, և ի հավելումն այդ գաղափարի՝ սրբազան է համարվում ժողովրդի կողմից՝ հանուն իր ազգային ազատության ու անկախության նվաճողների դեմ ուղղված պատերազմի:

Քուռկիկ Ջալալին հայ դիցերոսների համար հույժ հարազատ, թանկագին ու խորհրդավոր մի կերպար է, որի անունը պատահական չէ: Ձին Քուռկիկ՝ հավերժ երիտասարդ, չծերացող, ժամանակ-տարածությունում հավերժ նորոգվող, իսկ Ջալալին՝ հրեղեն, անմահ ոգի է՝ ոչ մարմնավոր գոյությամբ: Ոգեգիտության և երազաբանության մեջ Ձին ոգեղենության, ուժի, աստվածատու շնորհների, կյանքի անկասելի ընթացքի, «մուրազի» խորհրդանիշ է:

Հատկանշական է նկատել այն, որ մինչ ձիուն «տիրանալը», յուրաքանչյուր հերոս պետք է անցնի կենդանուն իրեն ենթարկելու, իր վրա նստելու փորձությունը: Ձին էպոսում ներկայացվում է նաեւ որպես **«իմաստուն ձի»**, բազմիցս նա իր հեծվորներին հուշում է՝ ինչ անել, ինչ ճանապարհով գնալ, զորացման ինչ եղանակների դիմել, ինչպես նաև հուսահատության գիրկն ընկած հերոսին ոգևորում է, ուժ տալիս:

Քուռկիկ Ջալալու խորհուրդն էպոսում ամենաառեղծվածայինն ու հանելուկայինն է, սակայն փաստ է, որ էպոսի հիմնական ճյուղերի հերոսներն առանց նրա իրանց կյանքը, թշնամու դեմ պայքարելն ու հաղթելը չէին պատկերացնում:

Տեր աստված, ինչպե~ս տ՛երթամ կռիվ:
Քուռկիկ Ջալալին, տեսնելով տիրոջ երկմտելը, ասում է.
«Է~յ, անիրավ, ի՞նչ կը վախենաս,
Քանի մի քո թու՛ր կը կտրի,
Էնքան էլ իմ շու՛նչ կը կտրի.
Քանի մի քո թու՛ր կը կտրի,
Էնքան էլ իմ ո՛տ կը տրորի:
Դավիթ, մի՛ էրկմտի, քըշի:
Դու իմ քամկից վե չը գաս, չը խաբվես:

Փոքր Միերը էպոսի հերոսական սերնդի վերջին ներկայացուցիչն է: Էպոսի չորրորդ ճյուղը նվիրված է նրա հալածական և հերոսական կյանքի պատմությանը՝ **վրեժխնդրության ծարավի հագեցմամբ:**

Փոքր Միերը Սասունցի Դավթի ու Խանդութ Խաթունի որդին է: Ամուսնությունից հետո Դավիթը մեկնում է Գյուրջիստան և 7 տարի մնում այնտեղ: Խանդութը որդի է ունենում ու կոչում Միեր: Չափահաս դառնալով՝ նա որոշում է գնալ և գտնել հորը: Ճանապարհին հայր ու որդի հանդիպում են և իրար չճանաչելով՝ մենամարտում: Դավիթը Միերի բազկապանից ճանաչում է որդուն, չի ներում, որ նա հանդգնել է մենամարտել իր հետ և անիծում է. «Անմա՛հ ըլնես, անժառա՛նգ»:

Դավթի մահից հետո հորը փոխարինած Փոքր Միերը պատերազմում է թշնամիների դեմ և հաղթում՝ լուծելով հոր վրեժը: Ապա ամուսնանում է գեղեցկուհի Գոհարի հետ: Բայց կատարվում է հոր անեծքը. Միերը մնում է անժառանգ: Սասնա վերջին քաջազունը փակվում է Ազռավաքար ժայռի մեջ՝ իրեն առ հավերժ զնդանելով լեռան մեջ:

2. Աշակերտների մեջ հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ամրապնդումը

Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա որպես հայ՝ որն է հայրենիքում իր անելիքը: Ազգային գաղափարախոսությունը պետք է հուշի սեփական պատմական առաքելություն, որտեղ ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով: Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը կդառնան արժեհամակարգի ձևավորման գործում:

Աշակերտները բացահայտելով էպոսի գաղափարական բովանդակության հիմնահարցերը, կունենան տեսլական՝ ինչպիսին դառնալ, դեպի ուր շարժվել:

«Հայ գրականություն» առարկայի ուսումնասիրման շնորհիվ ձևավորվում է ազգային դիմագիծ, պետականամետ մտածելակերպ ունեցող հայ ժողովուրդ և հայոց պետականության դերը համաշխարհային պատմության համատեքստում պատկերացնող, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու անձ և քաղաքացի:

Բարձր դասարանում էպոսի ավելի խորացված ու համակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ավելի շատ ուշադրություն դարձնելու նրա գաղափարական բովանդակությանը, դաստիարակելու աշակերտներին դյուցազնավեպի ոգով: Աշակերտը պետք է ընկալի նյութի հիմնական գաղափարը, ինչն էլ կնպաստի արժեքների, ազգային ինքնության ընկալմանն ու ձևավորմանը: Հայրենասիրական ստեղծագործությունների ուսումնասիրումը անհրաժեշտ գործընթաց է հայ դպրոցականի համար: Դրանց միջոցով նա ծանոթանում է ազգի մշակույթի, նրա անցած պատմական ուղու և հայտնի հերոսների հետ:

Ստեղծագործությունը ուղակիորեն ազդում է սովորողների ներաշխարհի, հոգեբանության վրա, հարստացնում ու զարգացնում է նրանց արժեքային համակարգը, սովորեցնում սիրել հայրենիքը և անհրաժեշտության պահին պայքարել նրա ազատության և անկախության համար:

Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները պետք է՝

- լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին,
- կարևորի ազգային-պետական մտածողության և գործելակերպ ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք,
- ունենա ազգային ինքնագիտակցություն,
- կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,

- ունենա արդարության, լավատեսության և պատասխանատվության զգացում,
- գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը,
- գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը,
- գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները,
- աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն:

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիրակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրներ: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիրակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

Դյուցազնավեպի ուսուցման ընթացքում ուսուցիչը որոշակի դաստիրակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիրակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա (Սասուն, Մուշ), դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ (թատերական ներկայացումներ) և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիրակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Յուրաքանչյուր ուսուցիչ ձգտում է անթերի դաս անցկացնել, սակայն միշտ չէ, որ դա հաջողվում է: Որակյալ դաս անցկացնելը այդքան էլ հեշտ չէ, նույնիսկ փորձառու ուսուցչի համար:

Էպոսի ուսուցման նպատակները բազմազան են, սակայն առանձնացնենք նրանցից մեկը՝ զինել աշակերտներին ազգային արժեքներով: Այդ նպատակին հասնելու համար նախապես անհրաժեշտ է լուծել կրթադաստիրակչական մի շարք կարևոր խնդիրներ.

1. Սովորողներին զինել հին, միջնադարի, նոր և նորագույն ժամանակների գրականության ամբողջական գիտելիքներով, որոց միջով կարմիր թելով պետք է անցնի ազատության, անկախության, պետականության ստեղծման և ամրապնդման համար պայքարին սեփական մասնակցությունը բերելու գաղափարը: Այդ գիտելիքները մեծապես կօգնեն հասկանալ ու իմաստավորել հայ ժողովրդի անցյալն ու ներկան, դասեր քաղել

պատմությունից: Գրականության խոր իմացությունը կօգնի մեր հանրապետության քաղաքացիներին կապվելու մայր հողին, տեր կանգնելու հայրենի տուն ու տեղին:

2. Ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները, հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները:

3. Գաղափար տալ հայ մշակույթի, քաղաքակրթության նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների, առանձնահատկությունների մասին: Ծանոթացնել հայ ժողովրդի մշակույթային արժեքների և համամարդկային նվաճումների հետ: Ծանոթացումը հայրենի երկրի մշակույթին, պատմամշակույթային կոթողներին:

4. Ցույց տալ ժողովրդի աշխատասիրությունը, ազատ, խաղաղ և ստեղծագործ աշխատանքի նրա բնածին ձգտումը: Ներարկել սեր և հարգանք աշխատանքի, աշխատավոր և բարիքներ ստեղծող մարդկանց նկատմամբ:

5. Պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի, ապրելակերպի ու ավանդույթների, վարքի ու բարքի մասին, հասկանալի դարձնել, թե ինչպես են ապրել ու աշխատել մեր նախնիները, ինչպես են ընտանիք կազմել, սնվել ու հագնվել: Այս գիտելիքները սովորողներին կմոտեցնեն մեր ազգային արմատներին ու ակունքներին:

6. Բացահայտել պատմամշակույթային գործիչների՝ պատմություն կերտողների կյանքն ու գործը: Հասկանալի դարձնել, որ պատմական այդ գործիչների միջոցով են իրականացվում ազգային-հասարակական ձգտումներն ու իդեալները:

7. Բացահայտել պատմական ճշմարտությունը, նշել, որ այն ծնվում է տարբեր սկզբնաղբյուրների համադրումից:

8. Դաստիրակել խորը հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում: Ներարկել այն գաղափարը, որ հայրենիքին ու հայոց բանակին ծառայելը պատվի գործ է:

9. Ճանաչելի դարձնել Հայաստան աշխարհն ու հայրենի բնօրրանը, բնապատմական և պատմամշակույթային այն միջավայրը, որտեղ ապրել ու իր պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը:

10. Հասնել այն բանին, որ իր ժողովրդի հարուստ պատմական փորձով զինված Հայաստանի վաղվա քաղաքացին գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, անկախ պետականության կերտման, հայրենիքի բարգավաճման և վերածնության գործին:

11. Նպաստել մարդասիրության և սոցիալական արդարության ոգով տոգորված ժամանակակից ազատ ու գիտակից անհատի և քաղաքացու ձևավորմանը:

«Սասունցի Դավիթ» էպոսը օտար բռնակալության դեմ հայ ժողովրդի դարավոր պայքարը ներկայացնող էպիկական հուշարձան է, աշխարհի էպիկական

ստեղծագործությունների շարքում լավագույն հուշարձաններից է: Լայն ընդգրկումով, կառուցվածքի ամբողջականությամբ, ժողովրդավարությամբ, ազգային ոգին համակողմանիորեն արտահայտելու հատկանիշներով առանձնանում է շատ ժողովուրդների դյուցազնավեպերից:

Հայկական էպոսի նշված հատկանիշները համամարդկային բնույթ ունեն, որոնք ձևավորվել, մշակվել են դարերի ընթացքում և բնորոշ են հայ ժողովրդին: Պատմության հորձանուտում օտարերկրյա հզոր ուժերը հաճախ ավերել են մեր երկիրը, ոչնչացրել պատմական հուշարձանները, հոգևոր և աշխարհիկ շինությունները, բայց չեն կարողացել ընկճել հայ ժողովրդի՝ ազատության ձգտող կենդանի ոգին: Սա է «Սասունցի Դավիթ» հերոսական էպոսի հիմնական գաղափարը, նրա էությունը:

Էպոսում հիանալի կերպով զուգակցված են աշխատանքից հառնող հերոսությունը ռազմի դաշտում ցուցաբերված հերոսության հետ, որը մեզ համար առանձնապես թանկ է, մենք գիտենք, որ միայն այս հերոսությամբ են զորավոր այն անունները, որ մենք հպարտությամբ ենք արտասանել (Տիգրան Մեծ, Վարդան Մամիկոնյան, Զորավար Անդրանիկ, Սողոմոն Թելերյան, Հովհաննես Բաղրամյան, Մոնթե Մելքոնյան, Թաթուլ Կրպեյան, Ռոբերտ Աբաջյան և անթիվ անմահներ) և կարտասանենք, այն մարդկանց անունները, ովքեր այսօր մուրճ են բռնում, վաղը սրախողխող կանեն ոսոխին, այսօր դարբնի սալի հետ են կապված ոչ թե շղթայով, այլ աշխատանքի հանդեպ ունեցած սիրով, իսկ վաղը կսավառնեն եթերում, որպեսզի բնաջնջեն մայր երկրի սահմանները խախտողներին:

Սակայն մեզ համար Սասնա հերոսները թանկ են մի այլ պատճառով ևս: Նրանք թանկ են ժողովրդի հետ ունեցած իրենց միասնության գիտակցությամբ, այն ժողովրդի, որի զավակներն են իրենք:

Էպոսի ամենահիասքանչ տեսարանում, երբ Դավիթը Մըսրա Մելիքի դեմ կռվի գնալուց առաջ, հրաժեշտ է տալիս համաքաղաքացիներին ու համագյուղացիներին, անսահման սիրո ու խանդաղատանքի խոսքեր ասելով նրանց.

— Աղբերնե՛ր, քուրե՛ր, դուք մի՛ վախենաք,
Աստծու կամքով կ’էրթամ ես կռիվ.
Օ՛, քուրեր, դուք կացեք բարով,
Դուք ինձի քուրրությո՛ւն եք արե.
Օ՛, մերեր, դուք կացե՛ք բարով,
Դուք ինձի մերությո՛ւն եք արե:
Բարի՛ դրկիցներ, դուք կացե՛ք բարով,
Դուք կացե՛ք բարով մեծ ու պստիկով.
Իմ դուռ-դրկիցներ, ձեր էրես շա՛տ եմ թռեր,
Ինձ հալա՛լ արեք:

Բարի տանտիկիններ՛ր, ինչ հա՛ց կը թխեք,
Դավթի անուն հիշեցեք:
Ջահելնե՛ր, դուք է՛լ, ինչ որ քե՛ֆ կ՚անեք,—
Դավթի անո՛ւն հիշեցեք:
Իմ քուրե՛ր, մերե՛ր, իմ լա՛վ դրկիցներ,
Մնացե՛ք բարով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա, որն անկասկած շատ մեծ նշանակություն ունի Հայաստանի և հայ ժողովրդի համար: Խոսքը գնում է ազգային արժեքային համակարգի ձևավորման մասին գրականության դասերին: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, հատկապես՝ գրականության առարկան: Դպրոցում սովորողները գրականության ծրագրի շրջանակներում ծանոթանում են հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ձեռքբերումներին, ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի դժվարություններին ու կորուստներին:

Գրականության առարկայի ուսումնասիրման շնորհիվ ձևավորվում է ազգային դիմագիծ, պետականամետ մտածելակերպ ունեցող, հայ ժողովրդ և հայոց պետականության դերը համաշխարհային պատմության համատեքստում պատկերացնող, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու անձ ու քաղաքացի: Այդ իսկ պատճառով արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Մշակութային կարողունակությունը զարգացնելու համար յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա, որ որպես հայ՝ ո՞րն է իր անելիքն այստեղ՝ հայրենիքում: Ազգային գաղափարախոսությունն պետք է հուշի սեփական պատմական առաքելությունը, որտեղ ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով: Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը, իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարություն, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային-հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա:

- Էպոսի ուսումնասիրումը անհրաժեշտ գործընթաց է հայ դպրոցականի համար, քանի որ նա ծանոթանում է ազգի մշակույթին, նրա անցած պատմական ուղուն, հայտնի հերոսներին:
- Էպոսն ուղղակիորեն ազդում է սովորողի ներաշխարհի, հոգեբանության վրա, հարստացնում ու զարգացնում նրա արժեքային համակարգը, սովորեցնում սիրել

հայրենիքը և անհրաժեշտության պահին պայքարել նրա ազատության և անկախության համար:

- Էպոսի ուսումնասիրումը բացառիկ նշանակություն ունի սովորողներին հոգևոր, բարոյական, ազգային և համամարդկային արժեքներով դաստիարակվելու գործում:
- Էպոսն ունի դաստիարակչական մեծ ներուժը՝ աշակերտի մեջ սերմանելով բարություն, ազնվություն, ճշմարտասիրություն, հարգանք մարդու նկատմամբ:
- Ապացուցված է, որ ճիշտ ու նպատակային ընտրված մեթոդների միջոցով էպոսի ուսումնասիրումը բերում է ցանկալի արդյունքի:
- Յուրաքանչյուր ուսուցչի գերխնդիրն է սովորողների մոտ հայրենասիրական ստեղծագործությունների ուսուցման ընթացքում ճանաչելի ու սիրելի դարձնել Հայրենիքը, որպեսզի յուրաքանչյուր Հայ ուժերի ներածին չափով նպաստ բերի նրա հզորացմանն ու բարգավաճմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբեղյան Մ., Մատենագրություն Սասունցի Դավիթ Հայ ժողովրդական վեպում, Երևան, 1939
2. Աբեղյան Մ., Հայ ժողովրդական վեպը, Թիֆլիս, 1908
3. Գրիգոյան Ա., Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1980
4. Դոլուխանյան Ա., Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան 2008
5. Դոլուխանյան Ա., Հայ գրականության պատմություն, Երևան, 2006
6. Մարիա Ազնաուրյանի բլոգ, 2020թ.
7. Գևորգյան Ա., Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Երևան: 2002
8. Հ.Օրբելի, Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1956
9. http://gradaran.ejmiatsin.am